# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԵՎՐԱՋԱՍՏ) ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետ՝ Հայաստան)

և

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝ Միություն,

այսուհետ միասին՝ Կողմեր,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) մասին Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 2018/1727 կանոնակարգը (ԵՄ) և փոխարինելով և ուժը կորցրած ճանաչելով Խորհրդի 2002/187/JHA որոշումը[1] (Եվրաջասթի կանոնակարգ), որը կիրառվում է համաձայն Եվրոպական միության մասին պայմանագրի և Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի, մասնավորապես՝ Եվրաջասթի կանոնակարգի 47-րդ հոդվածի, 52-րդ հոդվածի 1-ին կետի և 56-րդ հոդվածի 2-րդ կետի,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ մասնավորապես Եվրաջասթի կանոնակարգի 56-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետը, որով սահմանվում են Եվրաջասթի կողմից երրորդ երկրներին և միջազգային կազմակերպություններին անձնական տվյալներ փոխանցելու ընդհանուր սկզբունքները, որոնց համաձայն Եվրաջասթը կարող է անձնական տվյալներ փոխանցել երրորդ երկրի՝ Միության և այդ երրորդ երկրի միջև կնքված միջազգային համաձայնագրի հիման վրա՝ համաձայն Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 218-րդ հոդվածի:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ծանր հանցագործությունների, մասնավորապես կազմակերպված հանցավորության և ահաբեկչության հետևանքով առաջացած մարտահրավերներին դիմակայելու նպատակով՝ քրեական վարույթներով սերտ և դինամիկ իրավական համագործակցությունը զարգացնելու հարցում ինչպես Եվրաջասթի, այնպես էլ Հայաստանի շահերը, միևնույն ժամանակ ապահովելով անհատի հիմնարար իրավունքների ու ազատությունների, այդ թվում՝ անձնական

[1] ԵՄ ՊՏ L 295, 21.11.2018 թ., էջ 138:

տվյալների գաղտնիության և պաշտպանության հետ պատշաճ երաշխիքներ,

ՀԱՄՈԶՎԱԾ ԼԻՆԵԼՈՎ, որ Եվրաջասթի և Հայաստանի միջև իրավական համագործակցությունը լինելու է փոխշահավետ և նպաստելու է Միության ազատության, անվտանգության և արդարության զարգացմանը,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Հայաստանը վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» 1981 թվականի հունվարի 28-ին Ստրասբուրգում կնքված կոնվենցիան (ԵՊՇ թիվ 108) և 2018 թվականի հոկտեմբերի 10-ին Ստրասբուրգում կնքված դրա փոփոխող Արձանագրությունը (ԵԽՊՇ թիվ 223), որոնք երկուսն էլ հիմնարար դեր են խաղում Եվրաջասթի տվյալների պաշտպանության համակարգում,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ Միությունում և Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակը,

ՀԱՐԳԵԼՈՎ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում կնքված Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (ԵՊՇ թիվ 5), որն արտացոլված է Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիայում,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ԳԼՈՒԽ I

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 1

Նպատակները

1. Սույն համաձայնագրի ընդհանուր նպատակն է ընդլայնել Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև իրավական համագործակցությունը ծանր հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում:

2. Սույն համաձայնագիրը թույլ է տալիս իրականացնել Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև անձնական տվյալների փոխանցում՝ ծանր հանցագործությունների, մասնավորապես կազմակերպված հանցավորության ու ահաբեկչության դեպքերով նախաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու հարցում Միության անդամ պետությունների և Հայաստանի իրավասու մարմինների գործողություններին, ինչպես նաև նրանց համագործակցությանը նպաստելու և այն ամրապնդելու նպատակով՝ միևնույն ժամանակ ապահովելով պատշաճ երաշխիքներ՝ կապված անհատների հիմնարար իրավունքների ու ազատությունների, այդ թվում՝ անձնական տվյալների գաղտնիության և պաշտպանության հետ:

ՀՈԴՎԱԾ 2

Գործողության ոլորտը

Կողմերն ապահովում են Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև համագործակցությունը Եվրաջասթի գործունեության ոլորտներում և իրավասությունների ու խնդիրների շրջանակում, ինչպես սահմանված է Եվրաջասթի մասին կանոնակարգով՝ համաձայն Եվրոպական միության մասին պայմանագրի և Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի, և սույն համաձայնագրի:

## ՀՈԴՎԱԾ 3

## Սահմանումները

Սույն համաձայնագրի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները.

1) «Եվրաջասթ» նշանակում է՝ Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալություն՝ ստեղծված Եվրաջասթի կանոնակարգով, այդ թվում՝ դրանում կատարված ցանկացած հետագա փոփոխություններով.

2) «անդամ պետություններ» նշանակում է՝ Միության անդամ պետություններ.

3) «իրավասու մարմին» նշանակում է՝ Միության համար՝ Եվրաջասթը, իսկ Հայաստանի համար՝ ներպետական օրենսդրությամբ հանցագործությունների դեպքերով նախաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու, այդ թվում՝ սույն համաձայնագրի II հավելվածում թվարկված՝ քրեական վարույթներով իրավական համագործակցության վերաբերյալ փաստաթղթերի կատարման համար պատասխանատու ներպետական մարմին.

4) «Միության մարմիններ» նշանակում է՝ Եվրոպական միության մասին պայմանագրով և Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրով կամ դրանց հիման վրա ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության շրջանակներում ստեղծված, սույն համաձայնագրի III հավելվածում թվարկված՝ համակարգերը, մարմիններ, հիմնարկներ և գործակալություններ, ինչպես նաև առաքելություններ կամ գործողություններ:

5) «ծանր հանցագործություն» նշանակում է՝ հանցագործության տեսակներ որոնց մասով Եվրաջասթն իրավասու է, մասնավորապես՝ սույն համաձայնագրի հավելված I-ով թվարկված և դրանց վերաբերելի հանցանքներ

6) «վերաբերելի հանցանքներ» նշանակում է՝ հանցագործություններ, որոնք կատարվել են ծանր հանցագործությունների կատարման միջոցներ ձեռք բերելու,

ծանր հանցագործությունների կատարումը դյուրացնելու կամ ծանր հանցագործություններ կատարած անձանց անպատժելիությունն ապահովելու նպատակով.

7) «Օգնական» նշանակում է՝ անձ, որը կարող է օգնել Ազգային անդամին, ինչպես նշված է Եվրաջասթի կանոնակարգի II գլխի II բաժնում, և Ազգային անդամի տեղակալին կամ Համագործակցության հարցերով դատախազին, ինչպես նշված է, համապատասխանաբար, Եվրաջասթի կանոնակարգում և սույն համաձայնագրի 5-րդ հոդվածում.

8) «Համագործակցության հարցերով դատախազ» նշանակում է՝ անձ, ով, ներպետական օրենսդրության համաձայն, Հայաստանում իրականացնում է դատախազի կամ դատավորի գործառույթ և Հայաստանի կողմից գործուղվել է Եվրաջասթ՝ համաձայն սույն համաձայնագրի 5-րդ հոդվածի.

9) «Համագործակցության հարցերով մագիստր» Եվրաջասթի կանոնակարգի իմաստով նշանակում է՝ Եվրաջասթի կողմից, սույն համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն, Հայաստանում նշանակված մագիստր.

10) «անձնական տվյալներ» նշանակում է՝ տվյալների սուբյեկտին վերաբերող ցանկացած տվյալ.

11) «մշակում» նշանակում է՝ ցանկացած գործողություն կամ գործողությունների ամբողջություն, որոնք կատարվում են անձնական տվյալների կամ անձնական տվյալների ամբողջության նկատմամբ՝ լինեն դրանք ինքնաշխատ եղանակով, թե ոչ, ինչպիսիք են հավաքելը, գրառելը, դասակարգելը, կառուցվածքավորելը, պահպանելը, հարմարեցնելը կամ փոփոխելը, վերականգնելը, քննարկելը, օգտագործելը, փոխանցման կամ տարածման միջոցով բացահայտելը կամ այլ կերպով հասանելի դարձնելը, խմբավորելը կամ համադրելը, սահմանափակելը, ջնջելը կամ ոչնչացնելը.

12) «տվյալների սուբյեկտ» նշանակում է՝ նույնականացված կամ նույնականացման ենթակա ֆիզիկական անձ. նույնականացման ենթակա ֆիզիկական անձն այն անձն է, որի ինքնությունը կարելի է ուղղակիորեն կամ

անուղղակիորեն որոշել մասնավորապես այնպիսի նույնականացուցիչների միջոցով, ինչպիսիք են անունը, նույնականացման համարը, գտնվելու վայրի վերաբերյալ տվյալները, կամ՝ առցանց նույնականացուցչի միջոցով կամ այդ անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական, գենետիկ, մտավոր, տնտեսական, մշակութային կամ սոցիալական ինքնությանը ներհատուկ մեկ կամ մի քանի գործոնների միջոցով.

13) «գենետիկ տվյալներ» նշանակում է՝ անհատի ժառանգած կամ ձեռք բերած գենետիկ հատկանիշներին վերաբերող անձնական տվյալներ, որոնք այնպիսի եզակի տեղեկություններ են տալիս այդ անհատի ֆիզիոլոգիայի կամ առողջության մասին, որոնք ստացվել են մասնավորապես տվյալ անձի կենսաբանական նմուշի հետազոտությունից.

14) «կենսաչափական տվյալներ» նշանակում է՝ ֆիզիկական անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական կամ վարքային բնութագրերի մասով հատուկ տեխնիկական մշակման արդյունքում ստացված անձնական տվյալներ, որոնք թույլ են տալիս կամ հաստատում են այդ ֆիզիկական անձի եզակի նույնականացումը, օրինակ՝ դեմքի պատկերները կամ դակտիլոսկոպիկ տվյալները.

15) «տեղեկություններ» նշանակում է՝ անձնական և ոչ անձնական տվյալներ.

16) «անձնական տվյալների պաշտպանության կանոնների խախտում» նշանակում է՝ անվտանգության խախտում, որը հանգեցնում է փոխանցված, պահպանված կամ այլ կերպ մշակված անձնական տվյալների պատահական կամ անօրինական ոչնչացման, կորստի, փոփոխման, չթույլատրված բացահայտման կամ դրանց հասանելիություն ունենալու.

17) «վերահսկիչ մարմին» նշանակում է՝ Միության համար՝ Տվյալների պաշտպանության հարցերով եվրոպական վերահսկիչ մարմին, իսկ Հայաստանի համար՝ ներպետական անկախ պետական մարմին, որը, 21-րդ հոդվածի համաձայն, պատասխանատու է տվյալների պաշտպանության համար, և որը ենթակա է ծանուցման 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 4

### Համակարգողները

1. Հայաստանը նշանակում է առնվազն մեկ համակարգող իր ներպետական իրավասու մարմիններից՝ Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև հաղորդակցությունը և համագործակցությունը դյուրացնելու նպատակով: Համագործակցության հարցերով դատախազը չի կարող լինել համակարգող:

Հայաստանն այդ համակարգողին նշանակում է նաև որպես ահաբեկչության հարցերով համակարգող:

2. Համակարգողի մասին տեղեկացվում է Միությանը: Համակարգողին փոխելու դեպքում Հայաստանը տեղեկացնում է Եվրաջասթին:

## ՀՈԴՎԱԾ 5

### Համագործակցության հարցերով դատախազը և անձնակազմը

1. Սույն համաձայնագրով նախատեսված համագործակցությունը դյուրացնելու նպատակով Հայաստանը Համագործակցության հարցերով դատախազ է գործուղում Եվրաջասթ:

2. Համագործակցության հարցերով դատախազի լիազորությունները և գործուղման տևողությունը սահմանվում են Հայաստանի կողմից՝ Եվրաջասթի հետ համաձայնեցմամբ:

3. Համագործակցության հարցերով դատախազին, աշխատանքի ծավալից կախված և Եվրաջասթի հետ համաձայնեցմամբ, կարող են օգնել մեկ կամ մի քանի Օգնական(ներ) և այլ օժանդակ անձնակազմ: Անհրաժեշտության դեպքում Օգնական(ներ)ը կարող է (են) փոխարինել Համագործակցության հարցերով դատախազին կամ հանդես գալ Համագործակցության հարցերով դատախազի անունից:

4. Հայաստանն ապահովում է, որ Համագործակցության հարցերով դատախազը և Համագործակցության հարցերով դատախազի օգնական(ներ)ն

օտարերկրյա իրավասու մարմինների հետ համագործակցության լիազորություն ունենան:

5. Համագործակցության հարցերով դատախազը և Համագործակցության հարցերով դատախազի օգնական(ներ)ը, Հայաստանի ներպետական օրենսդրության համաձայն, հասանելիություն պետք է ունենան ներպետական քրեական կամ Հայաստանի ցանկացած այլ ռեգիստրում պարունակվող տեղեկություններին:

6. Համագործակցության հարցերով դատախազը և Համագործակցության հարցերով դատախազի օգնական(ներ)ը պետք է լիազորված լինեն ուղղակիորեն կապ հաստատել Հայաստանի իրավասու մարմինների հետ:

7. Հայաստանը Եվրաջասթին տեղեկացնում է Համագործակցության հարցերով դատախազին և Համագործակցության հարցերով դատախազի օգնական(ներ)ին Հայաստանում սույն համաձայնագրին համապատասխան, իրենց առաջադրանքները կատարելու կապակցությամբ վերապահված իրավական լիազորությունների ճշգրիտ բնույթի և ծավալի մասին:

8. Համագործակցության հարցերով դատախազին և Համագործակցության հարցերով դատախազի օգնական(ներ)ին հանձնարարված առաջադրանքների մանրամասները, նրանց իրավունքներն ու պարտականությունները և հարակից ծախսերի հետ կապված հարցերը կարգավորվում են 26-րդ հոդվածի համաձայն Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև կնքված աշխատանքային պայմանավորվածությամբ:

9. Համագործակցության հարցերով դատախազի և Համագործակցության հարցերով դատախազի օգնական(ներ)ի աշխատանքային փաստաթղթերն Եվրաջասթի համար անձեռնմխելի են:

## ՀՈԴՎԱԾ 6

### Գործառնական և ռազմավարական հարցերով հանդիպումները

1. Համագործակցության հարցերով դատախազը, Համագործակցության հարցերով դատախազի օգնական(ներ)ը և Հայաստանի իրավասու մարմինների այլ ներկայացուցիչներ, այդ թվում՝ 4-րդ հոդվածում նշված համակարգող(ներ)ը, կարող են Եվրաջասթի նախագահի իրավերով մասնակցել ռազմավարական հարցերին առնչվող հանդիպումներին և գործառնական հարցերին առնչվող հանդիպումներին՝ համապատասխան Ազգային անդամների համաձայնությամբ :

2. Ազգային անդամները, նրանց տեղակալները և օգնականները, Եվրաջասթի վարչական հարցերով տնօրենը և Եվրաջասթի անձնակազմը կարող են մասնակցել Համագործակցության հարցերով դատախազի, Համագործակցության հարցերով դատախազի օգնականների կամ Հայաստանի իրավասու մարմինների այլ ներկայացուցիչների, այդ թվում՝ 4-րդ հոդվածում նշված համակարգողների կողմից կազմակերպված հանդիպումներին:

## ՀՈԴՎԱԾ 7

### Համատեղ քննչական խմբերը

1. Եվրաջասթը կարող է աջակցել Հայաստանին՝ անդամ պետություններից որևէ մեկի ազգային մարմինների հետ ստեղծելու համատեղ քննչական խմբեր (ՀՔԽ)՝ համաձայն նրանց միջև կիրառելի քրեական վարույթներով համագործակցություն նախատեսող իրավական հիմքերի, օրինակ՝ փոխադարձ օգնության մասին պայմանագրերի:

2. Եվրաջասթից կարող է ֆինանսական կամ տեխնիկական օգնություն հայցվել իր կողմից աջակցվող ՀՔԽ-ի աշխատանքների համար:

## ՀՈԴՎԱԾ 8

### Համագործակցության հարցերով մագիստրը

1. Հայաստանի հետ իրավական հարցերով համագործակցությունը դյուրացնելու նպատակով Եվրաջասթը կարող է Եվրաջասթի կանոնակարգին

համապատասխան Համագործակցության հարցերով մագիստր նշանակել Հայաստանում:

2. Համագործակցության հարցերով մագիստրի իրավասությունների մանրամասները, Համագործակցության հարցերով մագիստրի իրավունքներն ու պարտականությունները և համապասխան ծախսերի հետ կապված հարցերը կարգավորվում են 26-րդ հոդվածի համաձայն Եվրաջաստի և Հայաստանի իրավասու մարմինների միջև ձեռք բերված աշխատանքային պայմանավորվածությամբ:

## ԳԼՈՒԽ II

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ՀՈԴՎԱԾ 9

### Անձնական տվյալների մշակման նպատակները

1. Սույն համաձայնագրի շրջանակում հարցվող և ստացվող անձնական տվյալները ենթակա են մշակման միայն հանցագործությունների կանխման, նախաքննության, հայտնաբերման կամ քրեական հետապնդման կամ պատիժների կատարման նպատակներով՝ 10-րդ հոդվածի 6-րդ կետի և իրավասու մարմինների համապատասխան լիազորությունների սահմաններում:

2. Իրավասու մարմիններն ամենաուշը մինչև անձնական տվյալները փոխանցելու պահը հստակ նշում են տվյալների փոխանցման կոնկրետ նպատակը կամ նպատակները:

### ՀՈԴՎԱԾ 10

### Տվյալների պաշտպանության ընդհանուր սկզբունքները

1. Կողմերից յուրաքանչյուրը նախատեսում է, որ սույն համաձայնագրի շրջանակում անձնական տվյալների փոխանցումը և դրանց հետագա մշակումը պետք է.

ա) իրականացվեն արդար, օրինական ու թափանցիկ կերպով և միայն այն նպատակներով, որոնց համար դրանք, 9-րդ հոդվածի համաձայն, փոխանցվել են.

բ) լինեն համարժեք, համապատասխան և չգերազանցեն այն սահմանները, որոնց նպատակներով դրանք մշակվում են.

գ) լինեն ճշգրիտ և, ըստ անհրաժեշտության, թարմացվեն. Կողմերից յուրաքանչյուրը նախատեսում է իրավասու մարմինների պարտականությունը՝ ձեռնարկել բոլոր ողջամիտ քայլերը՝ առանց անհարկի ձգձգման ոչ ճշգրիտ անձնական տվյալները ջնջելու կամ շտկելու ուղղությամբ՝ հաշվի առնելով այն նպատակները, որոնց համար դրանք մշակվել են.

դ) պահվեն այնպիսի ձևով, որը թույլ կտա նույնականացնել տվյալների սուբյեկտներին ոչ ավելի երկար ժամկետով, քան անհրաժեշտ է անձնական տվյալները մշակելու նպատակների համար.

ե) մշակվեն այնպես, որ ապահովվի անձնական տվյալների պատշաճ անվտանգությունը, այդ թվում՝ չթույլատրված կամ անօրինական մշակումից և պատահական կորստից, ոչնչացումից կամ վնասումից պաշտպանությունը՝ օգտագործելով պատշաճ տեխնիկական կամ կազմակերպչական միջոցներ:

2. Անձնական տվյալները փոխանցող յուրաքանչյուր իրավասու մարմին (այսուհետ՝ փոխանցող մարմին) անձնական տվյալները փոխանցելու պահին կարող է նշել դրանց նկատմամբ հասանելիության կամ դրանցից օգտվելու մասով ցանկացած ընդհանուր կամ կոնկրետ սահմանափակում, այդ թվում՝ դրանք միջնորդավորված փոխանցելու, որոշակի ժամանակահատվածից հետո ջնջելու կամ ոչնչացնելու կամ դրանց հետագա մշակման առնչությամբ: Եթե այդ սահմանափակումների անհրաժեշտությունն առաջանում է անձնական տվյալների փոխանցումից հետո, փոխանցող մարմինը տեղեկացնում է անձնական տվյալներն

ստացող իրավասու մարմնին (այսուհետ՝ ստացող մարմին) համապատասխանաբար:

3. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի ստացող մարմնի պարտականությունը՝ կատարել անձնական տվյալների նկատմամբ հասանելիության և դրանց օգտագործման առնչությամբ փոխանցող մարմնի կողմից 2-րդ պարբերության մեջ նշված ցանկացած սահմանափակում:

4. Կողմերից յուրաքանչյուրը նախատեսում է իր իրավասու մարմնի պարտականությունը՝ ձեռնարկել պատշաճ տեխնիկական և կազմակերպչական միջոցներ, որպեսզի հնարավոր լինի ցույց տալ, որ տվյալների մշակումն իրականացվում է սույն համաձայնագրին համապատասխան, և որ նշված տվյալների սուբյեկտների իրավունքները պաշտպանված են:

5. Կողմերից յուրաքանչյուրը պետք է պահպանի սույն համաձայնագրով նախատեսված երաշխիքները՝ անկախ նշված տվյալների սուբյեկտի ազգությունից և առանց խտրականության:

6. Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է, որ սույն համաձայնագրի համաձայն փոխանցվող անձնական տվյալները ձեռք չեն բերվել Կողմերի համար պարտադիր ճանաչված՝ միջազգային իրավունքով նախատեսված՝ մարդու իրավունքների խախտմամբ:

Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է, որ ստացված անձնական տվյալները չեն օգտագործվելու մահապատժի նշանակման կամ ցանկացած այլ ձևի դաժան կամ անմարդկային վերաբերմունքի պահանջ ներկայացնելու, դրանք նշանակելու կամ իրագործելու համար:

7. Կողմերից յուրաքանչյուրը նախատեսում է սույն հոդվածի համաձայն կատարվող անձնական տվյալների բոլոր փոխանցումների և այդ փոխանցումների նպատակների հաշվառում:

ՀՈԴՎԱԾ 11

Տվյալների սուբյեկտների կատեգորիաները և

անձնական տվյալների հատուկ կատեգորիաները

1. Հանցագործությունից տուժած անձանց, վկաների կամ այնպիսի այլ անձանց վերաբերյալ անձնական տվյալների փոխանցումը, որոնք կարող են տեղեկություններ տրամադրել քրեական հանցագործությունների վերաբերյալ, թույլատրվում է միայն այն դեպքում, եթե դա յուրաքանչյուր առանձին դեպքում խիստ անհրաժեշտ է և համաչափ ծանր հանցագործություններով նախաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու համար:

2. Ռասայական կամ էթնիկական ծագման, քաղաքական հայացքների, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքների կամ արհեստակցական միությանն անդամակցելու, գենետիկ տվյալների, ֆիզիկական անձի եզակի նույնականացման նպատակով մշակված կենսաչափական տվյալների վերաբերյալ տեղեկություններ բացահայտող անձնական տվյալների, ֆիզիկական անձի առողջությանը կամ սեռական կյանքին կամ սեռական կողմնորոշմանը վերաբերող տվյալների փոխանցումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե դա յուրաքանչյուր առանձին դեպքում խիստ անհրաժեշտ է և համաչափ ծանր հանցագործություններով նախաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու համար:

3. Կողմերը, 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն, անձնական տվյալների մշակման համար նախատեսում են լրացուցիչ երաշխիքներ, այդ թվում՝ դրանց նկատմամբ հասանելիությանը ներկայացվող սահմանափակումներ, անվտանգության լրացուցիչ միջոցներ և միջնորդավորված փոխանցման մասով սահմանափակումներ:

## ՀՈԴՎԱԾ 12

### Անձնական տվյալների ինքնաշխատ մշակումը

Որոշումները, որոնք հիմնված են բացառապես փոխանցված անձնական

տվյալների ինքնաշխատ մշակման վրա (ներառյալ՝ պրոֆիլավորումը), ինչն իրավական տեսանկյունից բացասական ազդեցություն ունի կամ էականորեն ազդում է տվյալների սուբյեկտի վրա, արգելվում են՝ բացառությամբ այն դեպքերի, եթե դրանք օրենքով թույլատրված են ծանր հանցագործություններով նախաքննություն և քրեական հետապնդում իրականացնելու համար, ինչն ապահովում է տվյալների սուբյեկտի իրավունքների և ազատությունների պատշաճ երաշխիքներ, այդ թվում՝ առնվազն մարդու կողմից միջամտություն ստանալու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 13

Ստացված անձնական տվյալների միջնորդավորված փոխանցումը

1. Հայաստանը թույլ չի տալիս, որ իր իրավասու մարմինները սույն համաձայնագրի շրջանակում ստացված անձնական տվյալները փոխանցեն Հայաստանի այլ մարմինների, եթե չեն կատարվում հետևյալ բոլոր պայմանները.

ա) Եվրաջաստը տալիս է իր նախնական հստակ թույլտվությունը.

բ) միջնորդավորված փոխանցումն իրականացվում է միայն այն նպատակով, որով այդ տվյալները, 9-րդ հոդվածին համապատասխան, փոխանցվել են, և

գ) փոխանցման նկատմամբ կիրառվում են այն նույն պայմանները և երաշխիքները, որոնք կիրառվում են սկզբնական փոխանցման նկատմամբ:

Անկախ 10-րդ հոդվածի 2-րդ կետից՝ Հայաստանի իրավասու մարմինների միջև անձնական տվյալների փոխանակման դեպքում նախնական թույլտվություն անհրաժեշտ չէ:

2. Հայաստանը երաշխավորում է, որ սույն համաձայնագրի շրջանակներում ստացված անձնական տվյալների փոխանցումները երրորդ երկրի մարմիններին կամ միջազգային կազմակերպությանը կարգելվեն, եթե չեն իրականացվում

հետևյալ բոլոր պայմանները.

ա) միջնորդավորված փոխանցումը վերաբերում է այն անձնական տվյալներին, որոնք նախատեսված չեն 11-րդ հոդվածով.

բ) Եվրաջասթը տալիս է իր նախնական հստակ թույլտվությունը, և

գ) միջնորդավորված փոխանցման նպատակը նույնն է, ինչ Եվրաջասթի կողմից փոխանցման նպատակը:

3. Եվրաջասթը, 2-րդ պարբերության «բ» կետի համաձայն, տալիս է իր թույլտվությունը միայն այն դեպքում և այնքանով, որքանով առկա է միջոցների բավարար լինելու մասին որոշում, համագործակցության համաձայնագիր կամ, Եվրաջասթի մասին կանոնակարգի իմաստով, անհատների անձեռնմխելիության և հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության հետ կապված համարժեք երաշխիքներ տրամադրող միջազգային պայմանագիր, որով յուրաքանչյուր դեպքում կարգավորվում է միջնորդավորված փոխանցումը:

4. Միությունն ապահովում է, որ Եվրաջասթին արգելվում է սույն համաձայնագրի շրջանակներում ստացված անձնական տվյալները փոխանցել III հավելվածում չթվարկված Միության կառույցներին, երրորդ երկրի մարմիններին կամ միջազգային որևէ կազմակերպության, եթե չեն իրականացվում հետևյալ բոլոր պայմանները.

ա) փոխանցումը վերաբերում է այն անձնական տվյալներին, որոնք նախատեսված չեն 11-րդ հոդվածով.

բ) Հայաստանը տալիս է իր նախնական հստակ թույլտվությունը.

գ) միջնորդավորված փոխանցման նպատակը նույնն է, ինչ Հայաստանի փոխանցող մարմնի կողմից փոխանցման նպատակը, և

դ) երրորդ երկրի իշխանություններին կամ միջազգային կազմակերպությանը միջնորդավորված փոխանցման դեպքում առկա են միջոցների բավարար լինելու մասին որոշում, համագործակցության համաձայնագիր կամ,

Եվրաջասթի կանոնակարգի իմաստով, անհատների անձեռնմխելիության և հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության հետ կապված համարժեք երաշխիքներ տրամադրող միջազգային պայմանագիր, որով յուրաքանչյուր դեպքում կարգավորվում է միջնորդավորված փոխանցումը:

Առաջին ենթապարբերության մեջ նշված պայմանները չեն կիրառվում այն դեպքում, երբ Եվրաջասթն անձնական տվյալները տրամադրում է III հավելվածում թվարկված՝ Միության մարմիններին կամ անդամ պետություններում ծանր հանցագործությունների նախաքննության և հետապնդման համար պատասխանատու մարմիններին:

## ՀՈԴՎԱԾ 14

### Հասանելիություն ունենալու իրավունքը

1. Կողմերը նախատեսում են տվյալների սուբյեկտի իրավունքը՝ սույն համաձայնագրի համաձայն փոխանցված անձնական տվյալները մշակող մարմիններից ստանալ այն փաստի հաստատումը, թե արդյո՞ք իրեն վերաբերող անձնական տվյալները մշակվում են սույն համաձայնագրով սահմանված կարգով, և եթե այդպես է, ապա հասանելիություն ունենալ առնվազն հետևյալի վերաբերյալ տեղեկություններին.

ա) նշված տվյալների մշակման նպատակները և իրավական հիմքերը, կատեգորիաները, կիրառելիության դեպքում՝ այն ստացողները կամ ստացողների կատեգորիաները, որոնց համար բացահայտվել են կամ բացահայտվելու են անձնական տվյալները.

բ) մարմնին անձնական տվյալները ուղղելու կամ ջնջելու կամ մշակումը սահմանափակելու պահանջ ներկայացնելու իրավունքի առկայությունը.

գ) հնարավորության դեպքում՝ նախատեսված ժամկետը, որի ընթացքում անձնական տվյալները պահվելու են, կամ եթե դա հնարավոր չէ, ապա այդ ժամկետը որոշելու համար օգտագործվող չափանիշները.

դ) մշակման փուլում եղող անձնական տվյալների և այդ անձնական տվյալների աղբյուրների մասին ցանկացած հասանելի տեղեկության հաղորդում՝ պարզ և հասկանալի լեզվով.

ե) 21-րդ հոդվածում նշված վերահսկիչ մարմին բողոք ներկայացնելու իրավունքը և նրա կոնտակտային տվյալները:

Այն դեպքերում, երբ անձն օգտվում է առաջին ենթապարբերության մեջ նշված հասանելիության իրավունքից, նախքան հասանելիության մասով հարցման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը ոչ պաշտոնական խորհրդակցություն է անցկացվում փոխանցող մարմնի հետ:

2. Կողմերն ապահովում են, որ տվյալ մարմինն անդրադառնա հարցմանը՝ առանց անհարկի ուշացման և ցանկացած դեպքում պահանջն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Այս ժամկետը տվյալ մարմնի կողմից կարող է երկարացվել՝ հաշվի առնելով հարցում կատարելու համար պահանջվող ջանքերը, բայց ոչ մի դեպքում չպետք է գերազանցի երեք ամիսը:

3. Կողմերը կարող են նախատեսել 1-ին պարբերության մեջ նշված տեղեկության տրամադրման ուշացման, մերժման կամ սահմանափակման հնարավորություն այնքանով, որքանով այդ ուշացումը, մերժումը կամ սահմանափակումն անհրաժեշտ և համաչափ միջոց են՝ հաշվի առնելով տվյալների սուբյեկտի հիմնարար իրավունքները և շահերը, որպեսզի հնարավոր լինի.

ա) խուսափել պաշտոնական կամ իրավական բնույթի հարցումներին, նախաքննություններին կամ ընթացակարգերին խոչընդոտելուց.

բ) խուսափել հանցագործությունների կանխման, հայտնաբերման, նախաքննության կամ քրեական հետապնդում իրականացնելու կամ քրեական պատիժ կիրառելու կանխակալությունից:

գ) պաշտպանել հանրության անվտանգությունը.

դ) պաշտպանել ազգային անվտանգությունը, կամ

ե) պաշտպանել այլոց, ինչպես, օրինակ՝ տուժողների և վկաների իրավունքներն ու ազատությունները:

4. Կողմերը նախատեսում են տվյալ մարմնի պարտականությունը՝ տվյալների սուբյեկտին գրավոր տեղեկացնել.

ա) հասանելիության ցանկացած ուշացման, մերժման կամ սահմանափակման, ինչպես նաև դրանց պատճառների մասին, և

բ) համապատասխան վերահսկիչ մարմին բողոք ներկայացնելու կամ դատական պաշտպանության միջոցներ հայցելու հնարավորության մասին:

Սույն պարբերության առաջին ենթապարբերության «ա» կետով սահմանված տեղեկությունները կարող են բաց թողնվել, եթե դրանք, 3-րդ պարբերության իմաստով, բացասաբար են ազդում ուշացման, մերժման կամ սահմանափակման նպատակի վրա:

## ՀՈԴՎԱԾ 15

### Ուղղելու, ջնջելու կամ սահմանափակելու իրավունքը

1. Կողմերը նախատեսում են, որ տվյալների ցանկացած սուբյեկտ իրավունք ունի սույն համաձայնագրի համաձայն փոխանցված անձնական տվյալներ մշակող մարմիններից ստանալու տվյալների սուբյեկտին վերաբերող ոչ ճշգրիտ անձնական տվյալների ուղղում: Հաշվի առնելով մշակման նպատակները՝ ուղղում ստանալու իրավունքը ներառում է սույն համաձայնագրի շրջանակներում փոխանցված թերի անձնական տվյալները լրացնելու իրավունք:

2. Կողմերը նախատեսում են, որ տվյալների ցանկացած սուբյեկտ իրավունք ունի սույն համաձայնագրի համաձայն փոխանցված անձնական տվյալներ մշակող մարմիններից պահանջելու ջնջել տվյալների սուբյեկտին վերաբերող անձնական տվյալները, եթե անձնական տվյալների մշակումը խախտում է 10-րդ հոդվածի 1-ին կետը կամ 11-րդ հոդվածի 2-րդ կետը, կամ եթե անձնական տվյալները պետք է

ջնջվեն մարմինների համար պարտադիր իրավական պարտավորությունը կատարելու համար:

3. Կողմերը կարող են նախատեսել մարմինների՝ մշակման սահմանափակում տրամադրելու հնարավորություն, այլ ոչ թե 1-ին և 2-րդ պարբերություններում նշված անձնական տվյալների ուղղում կամ ջնջում, եթե.

ա) տվյալների սուբյեկտի կողմից վիճարկվում է անձնական տվյալների ճշգրտությունը, և դրանց ճշգրիտ կամ ոչ ճշգրիտ լինելը հնարավոր չէ պարզել, կամ

բ) եթե անձնական տվյալները պետք է պահպանվեն որպես ապացույց:

4. Անձնական տվյալները փոխանցող մարմինը և մշակող մարմինը միմյանց տեղեկացնում են 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված դեպքերի մասին: Տվյալները մշակող մարմինը ուղղում, ջնջում է նշված անձնական տվյալները կամ սահմանափակում դրանց մշակումը՝ փոխանցող մարմնի կողմից ձեռնարկված գործողություններին համապատասխան:

5. Կողմերը նախատեսում են 1-ին կամ 2-րդ պարբերությունների համաձայն պահանջն ստացած մարմնի պարտականությունը՝ առանց անհարկի ուշացման տվյալների սուբյեկտին գրավոր տեղեկացնել, որ անձնական տվյալները շտկվել են, ջնջվել, կամ որ դրանց մշակումը սահմանափակվել է:

6. Կողմերը նախատեսում են, որ 1-ին կամ 2-րդ պարբերության համաձայն պահանջն ստացած մարմինը պետք է տվյալների սուբյեկտին գրավոր տեղեկացնի.

ա) պահանջի ցանկացած մերժման և մերժման պատճառների մասին.

բ) համապատասխան վերահսկիչ մարմին բողոք ներկայացնելու հնարավորության մասին, և

գ) դատական պաշտպանության միջոցներ հայցելու հնարավորության մասին:

Սույն պարբերության առաջին ենթապարբերության «ա» կետում թվարկված տեղեկությունները կարող են բաց թողնվել 14-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պայմանների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 16

Անձնական տվյալների խախտումների մասին համապատասխան մարմիններին ծանուցելը

1. Սույն համաձայնագրի շրջանակներում փոխանցվող անձնական տվյալների վրա ազդող անձնական տվյալների խախտման դեպքում Կողմերը նախատեսում են, որ իրենց համապատասխան մարմիններն այդ խախտման մասին անհապաղ պետք է ծանուցեն միմյանց, ինչպես նաև իրենց համապատասխան վերահսկիչ մարմիններին, եթե հավանական է, որ անձնական տվյալների այդ խախտումը վտանգի կենթարկի ֆիզիկական անձանց իրավունքներն ու ազատությունները, և միջոցներ ձեռնարկեն դրա հնարավոր բացասական հետևանքները մեղմելու համար:

2. Ծանուցումը պետք է առնվազն նկարագրի՝

ա) անձնական տվյալների խախտման բնույթը, ներառյալ, հնարավորության դեպքում, նշված տվյալների սուբյեկտների կատեգորիաները և թիվը և նշված անձնական տվյալների գրանցումների կատեգորիաները և թիվը.

բ) անձնական տվյալների խախտման հավանական հետևանքները.

գ) տվյալներ մշակող մարմնի կողմից ձեռնարկված կամ առաջարկված միջոցները՝ ուղղված անձնական տվյալների խախտումները վերացնելուն, այդ թվում՝ դրանց հնարավոր բացասական ազդեցությունը մեղմելու համար ձեռնարկվող միջոցները:

3. Այն դեպքում, երբ 2-րդ պարբերության մեջ նշված տեղեկությունները հնարավոր չէ տրամադրել միաժամանակ, դրանք կարող են տրամադրվել փուլերով՝ առանց հետագա անհարկի ուշացման:

4. Կողմերը նախատեսում են իրենց համապատասխան մարմինների պարտավորությունը՝ փաստաթղթերով հիմնավորել սույն համաձայնագրի շրջանակներում փոխանցված անձնական տվյալների վրա ազդող անձնական

տվյալների ցանկացած խախտում, այդ թվում՝ խախտման հետ կապված փաստերը, դրա հետևանքները և ձեռնարկված շտկման միջոցները՝ դրանով հնարավորություն տալով իրենց համապատասխան վերահսկիչ մարմիններին ստուգելու սույն հոդվածի պահանջների կատարումը:

ՀՈԴՎԱԾ 17

Անձնական տվյալների խախտումների մասին տվյալների սուբյեկտին հաղորդելը

1. Այն դեպքում, երբ հավանականություն կա, որ 16-րդ հոդվածում նշված անձնական տվյալների խախտումը կարող է մեծապես վտանգի ենթարկել ֆիզիկական անձանց իրավունքներն ու ազատությունները, Կողմերը նախատեսում են անձնական տվյալների խախտման մասին առանց անհարկի ուշացման տվյալների սուբյեկտին հաղորդելու իրենց համապատասխան մարմինների պարտավորությունը:

2. 1-ին պարբերության համաձայն տվյալների սուբյեկտին արված հաղորդումը պարզ և հստակ լեզվով պետք է նկարագրի անձնական տվյալների խախտման բնույթը և առնվազն պարունակի 16-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով նախատեսված տարրերը:

3. 1-ին պարբերության մեջ նշված՝ տվյալների սուբյեկտին հաղորդումը չի պահանջվում, եթե.

ա) անձնական տվյալները, որոնց կապակցությամբ տեղի է ունեցել խախտումը, ենթարկվել են համապատասխան տեխնոլոգիական և կազմակերպչական բնույթի պաշտպանության միջոցների, որոնք տվյալներն անընթեռնելի են դարձնում ցանկացած անձի համար, որն իրավասու չէ դրանց նկատմամբ հասանելիություն ունենալու.

բ) ձեռնարկվել են հետագա միջոցներ, որոնք երաշխավորում են, որ տվյալների սուբյեկտների իրավունքների և ազատությունների համար այլևս առկա

չէ մեծ ռիսկ, կամ

գ) նման հաղորդման համար կարող են պահանջվել անհամաչափ ջանքեր, մասնավորապես, տեղի ունեցած դեպքերի քանակի պատճառով: Այդ դեպքում մարմնի կողմից հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային կամ նմանատիպ միջոցով, որով տվյալների սուբյեկտները կարող են տեղեկացվել հավասարապես արդյունավետ կերպով:

4. Տվյալների սուբյեկտին հաղորդումը կարող է ուշացվել, սահմանափակվել կամ բաց թողնվել 14-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պայմանների համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 18

## Անձնական տվյալների պահպանումը, վերանայումը, ճշգրտումը և ջնջումը

1. Կողմերը սույն համաձայնագրի շրջանակներում ստացված անձնական տվյալների պահպանման կամ այդ տվյալների պահպանման անհրաժեշտության պարբերական վերանայման համար նախատեսում են համապատասխան ժամկետներ, որպեսզի այդ տվյալները պահպանվեն ոչ ավելի, քան անհրաժեշտ է այն նպատակներով, որոնց համար դրանք փոխանցվում են:

2. Ամեն դեպքում հետագա պահպանման անհրաժեշտությունը պետք է վերանայվի ոչ ուշ, քան անձնական տվյալները փոխանցելուց երեք տարի հետո:

3. Եթե փոխանցող մարմինը հիմքեր ունի ենթադրելու, որ նախկինում իր փոխանցած անձնական տվյալները սխալ են, ոչ ճշգրիտ, թարմացված չեն կամ չպետք է փոխանցվեին, նա այդ մասին տեղեկացնում է ստացող մարմնին, որը պետք է ուղղի կամ ջնջի անձնական տվյալները և այդ մասին ծանուցի փոխանցող մարմնին:

4. Եթե իրավասու մարմինը հիմքեր ունի ենթադրելու, որ նախկինում իր

ստացած անձնական տվյալները սխալ են, ոչ ճշգրիտ, թարմացված չեն կամ չպետք է փոխանցվեին, նա այդ մասին տեղեկացնում է փոխանցող մարմնին, որը պետք է իր դիրքորոշումը հայտնի այդ հարցի վերաբերյալ:

Եթե փոխանցող մարմինը եզրակացնում է, որ անձնական տվյալները սխալ են, ոչ ճշգրիտ, թարմացված չեն կամ չպետք է փոխանցվեին, նա այդ մասին տեղեկացնում է ստացող մարմնին, որը պետք է ուղղի կամ ջնջի անձնական տվյալները և այդ մասին ծանուցի փոխանցող մարմնին:

## ՀՈԴՎԱԾ 19

## Մատենագրումը և փաստաթղթավորումը

1. Կողմերն ապահովում են անձնական տվյալների հավաքման, փոփոխման, դրանց նկատմամբ հասանելիության, բացահայտման, այդ թվում՝ միջնորդավորված փոխանցման, դրանց համադրման և ջնջման համար նախատեսված մատյանների կամ այլ փաստաթղթերի վարում:

2. Առաջին պարբերության մեջ նշված մատյանները կամ փաստաթղթերը պետք է հասանելի դարձվեն վերահսկիչ մարմնին՝ ըստ պահանջի, և օգտագործվեն միայն տվյալների մշակման օրինականությունը ստուգելու, ներքին մշտադիտարկման և տվյալների պատշաճ ամբողջականությունն ու անվտանգությունն ապահովելու համար:

## ՀՈԴՎԱԾ 20

## Տվյալների անվտանգությունը

1. Կողմերն ապահովում են տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների իրականացումը՝ սույն համաձայնագրի շրջանակներում փոխանցված անձնական տվյալների պաշտպանության նպատակով:

2. Տվյալների ինքնաշխատ մշակման մասով Կողմերն ապահովում են

այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք նախատեսված են.

ա) մերժելու չթույլատրված անձանց հասանելիությունն անձնական տվյալների մշակման համար օգտագործվող տվյալների մշակման սարքավորումներին (սարքավորումներին հասանելիություն ունենալու նկատմամբ հսկողություն).

բ) կանխելու տվյալների կրիչի չթույլատրված ընթերցումը, դրա կրկնօրինակումը, դրա փոփոխումը կամ ջնջումը (տվյալների կրիչի նկատմամբ հսկողություն).

գ) կանխելու անձնական տվյալների չթույլատրված մուտքագրումը և պահպանված անձնական տվյալների չթույլատրված ստուգումը, փոփոխումը կամ ջնջումը (պահպանության նկատմամբ հսկողություն).

դ) կանխելու չթույլատրված անձանց կողմից տվյալների փոխանցման սարքավորումների օգտագործմամբ տվյալների մշակման ինքնաշխատ համակարգերի օգտագործումը (օգտագործողի նկատմամբ հսկողություն).

ե) ապահովելու, որ տվյալների մշակման ինքնաշխատ համակարգերն օգտագործելու իրավունք ունեցող անձինք հասանելիություն ունենան միայն այն անձնական տվյալներին, որոնք ընդգրկված են իրենց՝ հասանելիություն ունենալու թույլտվության մեջ (տվյալների հասանելիության նկատմամբ հսկողություն).

զ) երաշխավորելու, որ հնարավոր է ստուգել և հաստատել, թե տվյալների հաղորդման սարքավորումների օգտագործմամբ ո՛ր մարմիններին կարելի է փոխանցել կամ ո՛ր մարմիններին են փոխանցվել անձնական տվյալները (հաղորդման նկատմամբ հսկողություն).

է) երաշխավորելու, որ հնարավոր է ստուգել և հաստատել, թե ո՛ր անձնական տվյալներն են մուտքագրվել տվյալների մշակման ինքնաշխատ համակարգեր, և ե՛րբ ու ո՛ւմ կողմից են անձնական տվյալները մուտքագրվել (մուտքագրման նկատմամբ հսկողություն).

ը) կանխելու անձնական տվյալների փոխանցման կամ տվյալների կրիչի

փոխանցման ընթացքում դրանք անօրինական ընթերցելը, կրկնօրինակելը, փոխելը կամ ջնջելը (տեղափոխման նկատմամբ հսկողություն).

թ) ապահովելու, որ խափանման դեպքում հնարավոր լինի անմիջապես վերականգնել տեղակայված համակարգերը (վերականգնում).

ժ) ապահովելու, որ համակարգի գործառույթներն իրականացվեն առանց թերացումների, որ թերացումների ի հայտ գալու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացվի (հուսալիություն), և որ պահպանված անձնական տվյալները հնարավոր չլինի փչացնել համակարգի անսարքությունների պատճառով (ամբողջականություն):

ՀՈԴՎԱԾ 21

Վերահսկիչ մարմինը

1. Կողմերը նախատեսում են մեկ կամ մի քանի անկախ պետական մարմիններ, որոնք պատասխանատու են տվյալների պաշտպանության համար՝ վերահսկելու սույն համաձայնագրի կատարումը և ապահովելու վերջինիս հետ համապատասխանությունը՝ պաշտպանելու նպատակով անձնական տվյալների մշակմանն առնչվող՝ ֆիզիկական անձանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

2. Կողմերն ապահովում են, որ՝

ա) յուրաքանչյուր վերահսկիչ մարմին իր առաջադրանքները կատարելիս և իր լիազորություններն իրականացնելիս գործի ամբողջովին անկախ.

բ) յուրաքանչյուր վերահսկիչ մարմին զերծ լինի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի արտաքին ազդեցությունից, ինչպես նաև չպասի ցուցումների կամ չստանա դրանք.

գ) յուրաքանչյուր վերահսկիչ մարմնի անդամ ունենա պաշտոնավարման որոշակի երաշխավորված ժամկետ, ինչպես նաև կամայականորեն պաշտոնից ազատվելու մասով երաշխիքներ:

3. Կողմերն ապահովում են, որ յուրաքանչյուր վերահսկիչ մարմին ունենա մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, տարածք և ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ են իր առաջադրանքների և լիազորությունների արդյունավետ կատարման համար:

4. Կողմերն ապահովում են, որ յուրաքանչյուր վերահսկիչ մարմին ունենա քննություն և միջամտություն կատարելու արդյունավետ լիազորություններ՝ իր կողմից վերահսկվող մարմինների նկատմամբ հսկողություն իրականացնելու և իրավական գործընթացներ սկսելու համար:

5. Կողմերն ապահովում են, որ յուրաքանչյուր վերահսկիչ մարմին ունենա լիազորություն՝ լսելու անհատների կողմից ներկայացվող բողոքներն իրենց անձնական տվյալների օգտագործման վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 22

Արդյունավետ դատական պաշտպանության միջոցի իրավունքը

1. Կողմերը նախատեսում են, որ տվյալների յուրաքանչյուր սուբյեկտ, անկախ այլ վարչական կամ արտադատական պաշտպանության որևէ միջոցից, ունենա արդյունավետ դատական պաշտպանության միջոցի իրավունք, եթե նա գտնում է, որ իր անձնական տվյալների՝ սույն համաձայնագրին ոչ համապատասխան մշակման արդյունքում սույն համաձայնագրով երաշխավորված իր իրավունքները խախտվել են:

2. Արդյունավետ դատական պաշտպանության միջոցի իրավունքը ներառում է տվյալների սուբյեկտին համաձայնագրի խախտման արդյունքում նման մշակմամբ պատճառված ցանկացած վնասի փոխհատուցման իրավունքը՝ յուրաքանչյուր Կողմի համապատասխան իրավական կարգավորումներով սահմանված պայմաններով:

ԳԼՈՒԽ III

ՀՈԴՎԱԾ 23

ԵՄ զգայուն կամ կարևոր ոչ զգայուն տեղեկությունների փոխանակումը

ԵՄ զգայուն կամ կարևոր ոչ գաղտնի տեղեկությունների փոխանակումը (եթե դա անհրաժեշտ է սույն համաձայնագրի շրջանակներում) և պաշտպանությունը կարգավորվում է Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև կնքված աշխատանքային պայմանավորվածությամբ:

ԳԼՈՒԽ IV

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 24

Պատասխանատվությունը և փոխհատուցումը

1. Իրավասու մարմինները, իրենց համապատասխան իրավական կարգավորումների համաձայն, պատասխանատվություն են կրում փոխանակված տեղեկություններում իրավական կամ փաստական բնույթի սխալների հետևանքով անհատին պատճառված ցանկացած վնասի համար: Տուժողի նկատմամբ իրենց համապատասխան իրավական կարգավորումներով նախատեսված պատասխանատվությունից խուսափելու նպատակով ո՛չ Եվրաջասթը, ո՛չ էլ Հայաստանի իրավասու մարմինները չեն կարող պնդել, որ մյուս կողմը ոչ ճշգրիտ տեղեկություններ է փոխանցել:

2. Եթե իրավասու մարմինը անհատին փոխհատուցում է վճարել 1-ին պարբերության համաձայն, և նրա պատասխանատվությունը եղել է այնպիսի տեղեկության օգտագործման արդյունք, որը սխալմամբ հաղորդվել է մյուս իրավասու մարմնի կողմից կամ մյուս իրավասու մարմնի կողմից հաղորդվել է իր պարտավորությունների խախտմամբ, որպես փոխհատուցում վճարված գումարը

վերադարձվում է մյուս իրավասու մարմնի կողմից, եթե այդ տեղեկությունը չի օգտագործվել սույն համաձայնագրի խախտմամբ:

3. Եվրաջասթը և Հայաստանի իրավասու մարմինները միմյանցից չեն կարող պահանջել վերադարձնել պատժիչ կամ ոչ փոխհատուցելի վնասների փոխհատուցումը:

## ԳԼՈՒԽ V

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 25

### Ծախսերը

Կողմերը նախատեսում են, որ իրավասու մարմիններն իրենք են կրելու սույն համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացած ծախսերը, եթե սույն համաձայնագրով կամ աշխատանքային պայմանավորվածությամբ այլ բան սահմանված չէ:

### ՀՈԴՎԱԾ 26

### Աշխատանքային պայմանավորվածությունը

1. Սույն համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերի միջև համագործակցության մանրամասները պետք է կարգավորվեն Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև Եվրաջասթի կանոնակարգի համաձայն կնքված աշխատանքային պայմանավորվածությամբ:

2. Աշխատանքային պայմանավորվածությունը փոխարինում է Եվրաջասթի և Հայաստանի իրավասու մարմինների միջև կնքված ցանկացած գործող աշխատանքային պայմանավորվածության:

ՀՈԴՎԱԾ 27

Կապն այլ միջազգային փաստաթղթերի հետ

Սույն համաձայնագիրը չի հակասում կամ այլ կերպ ազդում կամ ներգործություն ունենում Հայաստանի և որևէ անդամ պետության միջև կնքված՝ համագործակցության մասին կամ փոխադարձ իրավական օգնության մասին որևէ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրի, համագործակցության մասին ցանկացած այլ համաձայնագրի կամ պայմանավորվածության կամ քրեական գործերով իրավական համագործակցության շրջանակում աշխատանքային մակարդակի հարաբերությունների վրա:

ՀՈԴՎԱԾ 28

Կիրարկման մասին ծանուցումը

1. Կողմերը նախատեսում են յուրաքանչյուր իրավասու մարմնի պարտականությունը՝ հրապարակել իրենց կոնտակտային տվյալները, ինչպես նաև սույն համաձայնագրի շրջանակներում երաշխավորված անձնական տվյալների երաշխիքների վերաբերյալ հստակ և պարզ լեզվով տեղեկություններ սահմանող փաստաթուղթը, այդ թվում՝ տեղեկություններ՝ ընդգրկելով առնվազն 14-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված կետերը և տվյալների սուբյեկտների իրավունքների իրականացման համար հասանելի միջոցները: Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ այդ փաստաթղթի պատճենը տրամադրվի մյուս Կողմին:

2. Իրավասու մարմիններն ընդունում են կանոններ, որոնք հստակեցնում են, թե գործնականում ինչպես է կիրառվելու անձնական տվյալների մշակման վերաբերյալ դրույթների կատարումը, եթե այդպիսի կանոններ դեռևս չկան: Այդ կանոնների պատճենն ուղարկվում է մյուս Կողմին և համապատասխան վերահսկիչ մարմնին:

3. Կողմերը միմյանց ծանուցում են սույն համաձայնագրի կատարումը 21-րդ հոդվածի համաձայն վերահսկելու և դրա հետ համապատասխանությունն ապահովելու համար պատասխանատու վերահսկիչ մարմնի մասին:

## ՀՈԴՎԱԾ 29

### Ուժի մեջ մտնելը և կիրարկումը

1. Կողմերը հավանություն են տալիս սույն համաձայնագրին՝ իրենց ներպետական ընթացակարգերին համապատասխան:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ամսվան հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը, որի ընթացքում երկու Կողմերը միմյանց ծանուցել են 1-ին պարբերության մեջ նշված ընթացակարգերի ավարտի մասին:

3. Սույն համաձայնագիրը կիրարկվում է հետևյալ բոլոր պայմանների կատարման օրվան հաջորդող առաջին օրվանից.

ա) Կողմերը ստորագրել են 26-րդ հոդվածում նշված աշխատանքային պայմանավորվածությունը.

բ) Կողմերը միմյանց ծանուցել են սույն համաձայնագրով, այդ թվում՝ 28-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների կատարման մասին, և

գ) Կողմերից յուրաքանչյուրը ծանուցող Կողմին տեղեկացրել է, որ ծանուցումը, սույն ենթապարբերության «բ» կետի համաձայն, ընդունվել է:

Կողմերը միմյանց ծանուցում են գրավոր՝ հաստատելով առաջին ենթապարբերության մեջ սահմանված պայմանների կատարումը:

## ՀՈԴՎԱԾ 30

### Փոփոխությունները

1. Սույն համաձայնագրում փոփոխություններ կարող են կատարվել

գրավոր, ցանկացած պահի, Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխությունները պետք է ներառվեն պատշաճ ստորագրված առանձին փաստաթղթում: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ընթացակարգի համաձայն:

2. Սույն համաձայնագրի հավելվածներում թարմացումները Կողմերի միջև կարող են համաձայնեցվել դիվանագիտական հայտագրերի փոխանակմամբ:

## ՀՈԴՎԱԾ 31

### Վերանայումը և գնահատումը

1. Կողմերը համատեղ սույն համաձայնագրի կիրարկումը վերանայում են ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի հետո, իսկ դրանից հետո՝ պարբերաբար, ինչպես նաև ցանկացած պահի՝ Կողմերից որևէ մեկի պահանջի և այդ մասին Կողմերի միջև համաձայնության հիման վրա:

2. Կողմերը համատեղ գնահատում են սույն համաձայնագիրը դրա ուժի մեջ մտնելու օրվանից չորս տարի հետո:

3. Կողմերը նախապես որոշում են կայացնում վերանայման մանրամասների մասին և միմյանց տեղեկացնում են իրենց համապատասխան թիմերի կազմի մասին: Յուրաքանչյուր թիմի կազմում ընդգրկվում են տվյալների պաշտպանության և իրավական համագործակցության հարցերով համապատասխան փորձագետներ: Հաշվի առնելով կիրառելի օրենքները՝ վերանայման գործընթացի ցանկացած մասնակից պարտավոր է հարգել քննարկումների գաղտնիությունը և ունենալ համապատասխան հասանելիության թույլտվություն գաղտնի տեղեկություններին: Ցանկացած վերանայման նպատակով Կողմերն ապահովում են հասանելիություն համապատասխան փաստաթղթերին, համակարգերին և անձնակազմին:

## ՀՈԴՎԱԾ 32

### Վեճերի կարգավորումը և կասեցումը

1. Եթե սույն համաձայնագրի մեկնաբանման, կիրարկման կամ կատարման առնչությամբ ծագում է որևէ վեճ, ինչպես նաև դրա հետ կապված ցանկացած հարց, Կողմերի ներկայացուցիչներն սկսում են խորհրդակցություններ և բանակցություններ՝ փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելու նպատակով:

2. Անկախ 1-ին պարբերությունից՝ սույն համաձայնագրով նախատեսված պարտավորությունների էական խախտման կամ չկատարման դեպքում, կամ եթե առկա է հիմք, որից կարելի է ենթադրել, որ հնարավոր է մոտ ապագայում տեղի ունենա պարտավորությունների նման էական խախտում կամ չկատարում, Կողմերից յուրաքանչյուրը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել սույն համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելով:

Այդ գրավոր ծանուցումն արվում է միայն այն դեպքում, եթե Կողմերը ողջամիտ ժամանակահատվածում խորհրդակցություններ անցկացնելու արդյունքում որևէ լուծում չեն գտնում:

Կասեցումն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումն ստանալու օրվանից 20 օր հետո: Այդ կասեցումը կարող է կասեցնող Կողմի կողմից հանվել՝ այդ մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելով: Կասեցումը համարվում է հանված այդ ծանուցումն ստանալուց անմիջապես հետո:

3. Անկախ սույն համաձայնագրի կիրարկումը կասեցնելու որևէ դեպքից՝ սույն համաձայնագրի շրջանակներում կարգավորվող և մինչև դրա կասեցումը փոխանցված տեղեկությունները շարունակում են մշակվել սույն համաձայնագրով սահմանված կարգով:

## ՀՈԴՎԱԾ 33

Գործողությունը դադարեցնելը

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է մյուս Կողմին գրավոր ծանուցել սույն համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Գործողության դադարեցումն ուժի մեջ է մտնում ծանուցումն ստանալու օրվանից երեք ամիս հետո:

2. Սույն համաձայնագրի շրջանակում ընդգրկվող՝ մինչև դրա գործողության դադարեցումը փոխանցված տեղեկությունները շարունակում են մշակվել սույն համաձայնագրի գործողության դադարեցման օրվա դրությամբ գործող խմբագրությանը համապատասխան:

3. Գործողության դադարեցման դեպքում Կողմերը համաձայնում են իրենց միջև արդեն իսկ փոխանցված տեղեկությունների հետագա օգտագործման և պահպանման վերաբերյալ: Համաձայնության չգալու դեպքում Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջելու, որ իր հաղորդած տեղեկությունները ոչնչացվեն կամ վերադարձվեն իրեն:

ՀՈԴՎԱԾ 34

Ծանուցումները

1. 29-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն արված ծանուցումներն ուղարկվում են.

ա) Հայաստանի դեպքում՝ Հայաստանի արտաքին գործերի նախարարություն,

բ) Միության դեպքում՝ Եվրոպական միության խորհրդի գլխավոր քարտուղարին:

Սույն համաձայնագրի համաձայն արված ցանկացած այլ ծանուցում ուղարկվում է.

ա) Հայաստանի դեպքում՝ Հայաստանի արտաքին գործերի

նախարարություն,

բ) Միության դեպքում՝ Եվրոպական հանձնաժողով:

2. 1-ին պարբերության մեջ նշված ծանուցումների հասցեատիրոջ մասին տեղեկությունները կարող են թարմացվել դիվանագիտական ուղիներով:

## ՀՈԴՎԱԾ 35

### Իսկական տեքստերը

Սույն համաձայնագիրը կազմվում է երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բուլղարերեն, չեխերեն, խորվաթերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, էստոներեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իռլանդերեն, իտալերեն, լատիշերեն, լիտվերեն, մալթայերեն, լեհերեն, պորտուգալերեն, ռումիներեն, սլովակերեն, սլովեներեն, իսպաներեն և շվեդերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄ ՈՐԻ՝ ներքոստորագրյալ լիազորված անձինք, որոնք պատշաճ կերպով լիազորված են այդ նպատակով, ստորագրել են սույն համաձայնագիրը:

Կատարված է Բրյուսելում երկու հազար քսանչորս թվականի ապրիլի հինգին:

Съставено в Брюксел на пети април две хиляди двадесет и четвърта година.

Hecho en Bruselas, el cinco de abril de dos mil veinticuatro.

V Bruselu dne pátého dubna dva tisíce dvacet čtyři.

Udfærdiget i Bruxelles den femte april to tusind og fireogtyve.

Geschehen zu Brüssel am fünften April zweitausendvierundzwanzig.

Kahe tuhande kahekümne neljanda aasta aprillikuu viiendal päeval Brüsselis.

΄Εγινε στις Βρυξέλλες, στις πέντε Απριλίου δύο χιλιάδες είκοσι τέσσερα.

Done at Brussels on the fifth day of April in the year two thousand and twenty four.

Fait à Bruxelles, le cinq avril deux mille vingt-quatre.

Arna dhéanamh sa Bhruiséil, an cúigiú lá d'Aibreán sa bhliain dhá mhíle fiche a ceathair.

Sastavljeno u Bruxellesu petog travnja godine dvije tisuće dvadeset četvrte.

Fatto a Bruxelles, addì cinque aprile duemilaventiquattro.

Briselē, divi tūkstoši divdesmit ceturtā gada piektajā aprīlī.

Priimta du tūkstančiai dvidešimt ketvirtų metų balandžio penktą dieną Briuselyje.

Kelt Brüsszelben, a kétezer-huszonnegyedik év április havának ötödik napján.

Magħmul fi Brussell, fil-ħames jum ta' April fis-sena elfejn u erbgħa u għoxrin.

Gedaan te Brussel, vijf april tweeduizend vierentwintig.

Sporządzono w Brukseli dnia piątego kwietnia roku dwa tysiące dwudziestego czwartego.

Feito em Bruxelas, em cinco de abril de dois mil e vinte e quatro.

Întocmit la Bruxelles la cinci aprilie două mii douăzeci și patru.

V Bruseli piateho apríla dvetisícdvadsaťštyri.

V Bruslju, petega aprila dva tisoč štiriindvajset.

Tehty Brysselissä viidentenä päivänä huhtikuuta vuonna kaksituhattakaksikymmentäneljä.

Som skedde i Bryssel den femte april år tjugohundratjugofyra.

Հայաստանի Հանրապետության կողմից՝
За Република Армения
Por la República de Armenia
Za Arménskou republiku
For Republikken Armenien
Für die Republik Armenien
Armeenia Vabariigi nimel
Για τη Δημοκρατία της Αρμενίας
For the Republic of Armenia
Pour la République d'Arménie
Thar ceann Phoblacht na hAirméine
Za Republiku Armeniju
Per la Repubblica d'Armenia
Armēnijas Republikas vārdā –
Armėnijos Respublikos vardu
Az Örmény Köztársaság részéről
Għar-Repubblika tal-Armenja
Voor de Republiek Armenië
W imieniu Republiki Armenii
Pela República da Arménia
Pentru Republica Armenia
Za Arménsku republiku
Za Republiko Armenijo
Armenian tasavallan puolesta
För Republiken Armenien

Եվրոպական միության կողմից՝
За Европейския съюз
Por la Unión Europea
Za Evropskou unii
For Den Europæiske Union
Für die Europäische Union
Euroopa Liidu nimel
Για την Ευρωπαϊκή Ένωση
For the European Union
Pour l'Union européenne
Thar ceann an Aontais Eorpaigh
Za Europsku uniju
Per l'Unione europea
Eiropas Savienības vārdā –
Europos Sąjungos vardu
Az Európai Unió részéről
Għall-Unjoni Ewropea
Voor de Europese Unie
W imieniu Unii Europejskiej
Pela União Europeia
Pentru Uniunea Europeană
Za Európsku úniu
Za Evropsko unijo
Euroopan unionin puolesta
För Europeiska unionen

Ծանր հանցագործությունները

(3-րդ հոդվածի 5-րդ կետ)

ահաբեկչություն

կազմակերպված հանցավորություն

թմրանյութերի ապօրինի շրջանառություն

փողերի լվացման հետ կապված գործունեություն

միջուկային և ռադիոակտիվ նյութերի հետ կապված հանցագործություն

մաքսանենգ ճանապարհով ներգաղթյալների տեղափոխում

մարդկանց թրաֆիքինգ

ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների հետ կապված հանցագործություններ

սպանություն և ծանր մարմնական վնասվածքի պատճառում

մարդու օրգանների և հյուսվածքների ապօրինի առևտուր

առևանգում, ազատությունից ապօրինի զրկում և պատանդառում

ռասիզմ ու այլատյացություն

կողոպուտ և ծանրացուցիչ հանգամանքներում կատարված գողություն

մշակութային արժեք ներկայացնող առարկաների, այդ թվում՝ հնաոճ իրերի և արվեստի գործերի ապօրինի առևտուր

խաբեություն և խարդախություն

Միության ֆինանսական շահերի դեմ կատարված հանցագործություն

արժեթղթերով կնքված ինսայդերական գործարքներ և ֆինանսական շուկայի մեքենայություններ

կազմակերպված խմբի կազմում կատարված խոշոր դրամաշորթություն

(ռեկետ) և շորթում

ապրանքների և մտավոր սեփականության իրավունքի առարկաների կեղծում

վարչական փաստաթղթերի կեղծում և դրանց թրաֆիքինգ

փողի և վճարային միջոցների կեղծում

համակարգչային հանցագործություններ

կոռուպցիա

զենքի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի ապօրինի շրջանառություն

վտանգված կենդանատեսակների ապօրինի առևտուր

բույսերի և դրանց տարատեսակների վտանգված տեսակների ապօրինի առևտուր

բնապահպանական հանցագործություններ՝ ներառյալ նավերից առաջացող աղտոտումը

հորմոնալ նյութերի և աճը խթանող այլ միջոցների ապօրինի շրջանառություն

սեռական ոտնձգություն և սեռական շահագործում՝ ներառյալ երեխաների նկատմամբ կատարված սեռական ոտնձգությունների վերաբերյալ նյութեր տարածելը և երեխաներին սեռական հարաբերությունների առաջարկություն անելը,

ցեղասպանություն, մարդկության դեմ կատարված հանցագործություններ և ռազմական հանցագործություններ

Սույն հավելվածում նշված հանցագործության ձևերը գնահատվում են Հայաստանի իրավասու մարմինների կողմից՝ Հայաստանի օրենսդրության համաձայն:

________________

ՀԱՎԵԼՎԱԾ II

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները
և նրանց իրավասությունները
(Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետ)

Հայաստանի իրավասու մարմինները, որոնց Եվրաջասթը կարող է տվյալներ փոխանցել, հետևյալն են.

| Մարմին | Իրավասությունների նկարագրություն |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը ներպետական օրենսդրությամբ պատասխանատու է նախաքննության և քրեական հետապնդման համար: <br> Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը քննությունների մինչդատական փուլում գտնվող քրեական հարցերի՝ վարույթի վերաբերյալ միջազգային իրավական համագործակցության համար նշանակված Կենտրոնական մարմինն է: |
| Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Դատական (կամ հետագա փուլում, օրինակ, պատժի կատարման, դատապարտված անձանց փոխանցման) փուլում գտնվող քրեական հարցերի՝ վարույթի վերաբերյալ միջազգային իրավական համագործակցության համար նշանակված Կենտրոնական մարմին: |
| Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե | Ներպետական մարմին, որը լիազորված է Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իր իրավասության սահմաններում իրականացնելու ենթադրյալ հանցագործությունների նախաքննություն (մինչդատական քրեական վարույթ): |
| Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտե | Ներպետական մարմին, որը լիազորված է Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իր իրավասության սահմաններում իրականացնելու ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների նախաքննություն (մինչդատական քրեական վարույթ): |
| Հայաստանի Հանրապետության դատարաններ <br> Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններ <br> Հակակոռուպցիոն դատարան <br> Վերաքննիչ քրեական դատարան <br> Վերաքննիչ հակակոռուպցիոն | Ներպետական մարմիններ, որոնք լիազորված են կիրարկելու քրեական հարցերով դատական համագործակցության փաստաթղթերը: |

| Մարմին | Իրավասությունների նկարագրություն |
|---|---|
| դատարան | |

ՀԱՎԵԼՎԱԾ III

Միության մարմինների ցանկը

(3-րդ հոդվածի 4-րդ կետ)

Միության մարմինները, որոնց Եվրաջասթը կարող է փոխանցել անձնական տվյալներ.

Եվրոպական կենտրոնական բանկ (ECB),

Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակ (OLAF),

Սահմանային և առափնյա պահպանության եվրոպական ծառայություն (Frontex),

Եվրոպական միության մտավոր սեփականության գրասենյակ (EUIPO),

Հավաքական անվտանգության և պաշտպանության քաղաքականությամբ սահմանված առաքելություններ կամ գործողություններ՝ սահմանափակված իրավակիրառ և դատական գործունեությամբ,

Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալություն (Europol),

Եվրոպական դատախազություն (EPPO):

---

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024թ. ապրիլի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների և Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջև համագործակցության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարության**
**միջազգային պայմանագրերի և**
**իրավունքի վարչության պետ**

**Նելլի Սարոյան**